

Գլխի դին ղրուագուած է գեղեցիկ Չաթալթագ մը, կուրծքին վրայ խաչ, կարծես եւ եմբիփորոն:

Տապանագրին վերեւի «Հանգստարան» բառը փորագրուած է պատուանդանին գլուխը. իսկ բուն շիրմագրին առաջին վեց տողը անոր հարաւային էջին վրայ եւ երկրորդ վեց տողն ալ հիւսիսային էջին վրայ:

Կաթողիկոսին մահուան թուականը երկրորդ անգամ կրկնող երեք տողերն ալ փորագրուած են իրարու սերտ կերպով ընդելուզուած, որով ընթերցումը քիչ մը դժուարութեամբ կ'ըլլայ:

Տապանագիրս առաջին անգամ հրատարակած է 1898ին, Վիեննական Միթարեան Հ. Ալ. Վ. Պալման. բայց իսկականէն փոքր ինչ տարբեր¹:

Ուրիշներ ալ զայն հրատարակած են ազգային թերթերու մէջ, միշտ մոռնալով մահուան թուականը ցոյց տուող երեք տողիկները:

Վերջին անգամ զայն ներկայացուցի եւ երեմիա Չէլէպիի Ծանօթագրութիւններու մէջ²:

ԻԲ.

Շնորհիւ Տեառն շինեցաւ սուրբ աղբիւրս ձեռամբ Դանիէլ վարդապետի թվին ՌՃԼԸ հրամանաւ մուստաֆա պէկի

1689 թուականը (1138 + 551 = 1689) կրող այս աղբիւրը՝ զոր Դանիէլ վարդապետ մը շինել տուեր է. կը գտնուի եզեր՝ Հազրօէէն կէս ժամ հեռու գտնուած Ս. Թովմաս Առաքելի վանքին դուռը:

Ժամանակին յղած է ինձ զայն՝ Զաւէն եպ. Եղիաեան (նախորդ պատրիարք Կ. Պոլսոյ), երբ Առաջնորդական պաշտօնով կը գտնուէր այն կողմերը:

ԻԳ.

ՇԻՆԵԱԼ, ՁԵՌԱՄԲ ՄԷՅՄԱՐ ԽԱՉԱՍՐԻՆ
ԹՎ. ՌՃԹԼ

Աղբիւրի մը արձանագրութիւնն է, զոր հրատարակած էր Բիւզանդիոն 1914ին: ԽԱՉԱՍՐԻ անուն հարտարապետ մը կը յիշատակուի մէջը, բայց ՌՃԹԼ թուականը ինձ անհեթեթ կ'երեւի. կամ այն է՝ որ տպագրական սխալ մ'է՝ գործուած թերթին կողմէ, եւ կամ փորագրութիւնը ճիշդ չէ: Ըստ իս՝ այդ թուականը՝ որ անկասկած հայկականն է, ըլլալու է՝ կամ ՌՃԼԹ (1139 + 551 = 1690) եւ կամ պարզապէս ՌՃԹ (1109 + 551 = 1660): Աւելի հաւանականը առաջինն է եւ պէտք է ընդունիլ թէ այդ աղբիւրը շինուած է 1690ին:

ԻԴ.

Պատճառ եղեն հանել այս քաղցր ջրիս տեղի Յակնայ գեղէ՝ որ ապուշեղ անուանի որդիք Կիւրդի եւ Մարիամի Մարտիրոս Յովնանէս Գաբրիէլի այլ եւ ընկեր սոցին հաճի Սարգսի ծախիւք փողովք իւրեանց հալալ արդիւնք վասն ըմպելոյ պասքելոցն ծարաւ 'ի քաշելոյ ջրոյս եւ տալ ըմպել կամեցողի, այգի մի առեալի Ղարթալի գիւղի վասն հախ տալոյ Սորա մշակի գլխիս առնելն ի տարէ գլխի տալ վարձս սորին ըսպասաւորի եթէ ոք խափանէ ի Տէր պատժի թվին ՌՃԾԵ: Խնդրեմք վեհից եւ հարց մերոց ըմպել ջրոյս ասէք Աստուած ողորմի:

Այս արձանագրութիւնը կը գտնուի Կ. Պոլսոյ Պաշքըլի Ազգ. գերեզմանատունը՝ մեծկակ ջրհորի մը բերանին եզերքը կանգուն՝ թուի մարմարէ կոփուած քառիջեան եւ 2 մեղր երկայն սիւնի մը վրայ:

29 տողէ բաղկացեալ է, երկաթագիր փորագրուած. գիրերը շատ տճեւ եւ իրարու ընդելուզուած ու բաւական մը մաշած,

1. «Պատմ. կաթողիկէ վարդապետութեան ի հայս եւ միութեամ սորա ընդ հռովմէական եկեղեցւոյ», Վիեննա, էջ 164-165.
2. «Ներսիս Չէլէպի. Ստամբուլոյ պատմութիւն» Վիեննա հատոր Բ. էջ 602-603.
3. «Բիւզանդիոն» Կ. Պոլս 1914 նոյեմբ. 17/30, թիւ 5508.

զոր անձամբ ընդօրինակած եմ 1913ին, ողբացեալ Հ. Թովմաս Կեօրեանի վիեննական Միթարեան վարդապետին հետ:

Հայոց ՌՃԾԵ եւ Քրիստոսի (1155 + 551 =) 1706 թուին այդ ջրհորը փորել տուած են, ինչպէս կը յայտնէ արձանագրութիւնը, Ահնայ Ապուշեղ գիւղէն՝ Կիւրեղի եւ Մարիամի գաւակները՝ Մարտիրոս, Յովնանէս եւ Գաբրիէլ եւ ասոնց ընկերը Հաճի Սարգիս:

Ջրհորը բանալ տալով հանդերձ, անոր պահապան ու վերակացու եղողին ալ թռչալը ապահովելու համար, սոյն անձերը Կ. Պոլսոյ Ասիական կողմը Գաբրալ կոչուած գիւղին մէջ այգի մը կը գնեն եւ անոր բերած տարեկան եկամուտը կը յատկացնեն այդ նպատակին. ինչ վեհ զգացում....

Այս բարերարներուն շինած հորին ջրը ոչ միայն գերեզմանատունը այցելողներուն ծարաւը անցընելու համար եղած է, այլ եւ՝ հետզհետէ գործածուած է ջրելու այն տեղի ծառերը, որով՝ (էր երբեմն) Պալքըլի Ազգային Գերեզմանատունը սօսիներով ու բարտիներով ծածկուած խորհրդաւոր անտառի մը ձեւն առնել սկսած էր, ինչ որ գերեզմաններու համար առողջապահական մեծ պահանջ մ'է. ծառ եւ ծաղիկ:

Աւելորդ է ըսել, թէ Ջրհոր-մրհոր գոյութիւն չունի այժմ, Գաբրալի այգին ալ անհետ եղած է ի սպառ, եւ գոնցէ վերոյիշեալ սիւնն ալ՝ որ երկու եւ կէս դարու հնութիւն մ'էր, կոտորուած ու ջնջուած է ներկայիս:

(Շարունակելի)

Տ. Վ. Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ

ՀԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԻ ԽԱՉԱՍ

BELLԻ ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆԸ 1715ԵՆ՝

Այս ուղեգիրը՝ Bell՝ Կովկասեան Հայաստանէն անցած է 1715-1716ին, իբր անդամ Սէն Բեթէրսպուրկէն՝ Ռուսիոյ Մեծն Պետրոս Կայսեր կողմէն՝ Իսպահան, Պարսից Շահ Հիւսէյնի արքունիքը ղրկուած դեսպանութեան:

Թանկագին վկայութիւններ կան հոն Հայ վաճառականական գործունէութեան համար, թէեւ մանրամասնութիւններ եւ անուանական յիշատակութիւններ կը պակսին 1715ի այս ուղեգրութեան միջոցին, այսու հանդերձ ծանօթութիւններ կը տրուին հոս ու հոն գտնուող Հայոց վրայօք, տեղեկութիւններ որոնք անտարակուսելի է որ օր մը օգտակար կերպով պիտի

գործածուին: Այս պարագաները նկատի առնելով է որ Թարգմանաբար ըրած իմ այս «Հին ճանապարհորդք ի Հայս» յօդուածաշարքին օգակեցի նաեւ Bellի ուղեգրութիւնը:

Ստորեւ կ'արտագրեմ՝ Թարգմանելով Անգլիերէնէ՝ Bellի ուղեգրութեան Հայոց վրայօք եղած վկայութիւնները:

Յուլիս 13, 1715 «Աստրախան նշանակելի առեւտրական վայր մ'է որ կը

1. Bell's travels in Asia. էջ 273. A General Collection of the Best and Most Interesting Voyages and Travels. - by John Pinkerton. London 1811.

յարարեցի Պարսկաստանի, Գիլյայի, Պու-
խարայի եւ Հնդկաստանի հետ: Այս ազ-
գերը հոս ունին հասարակային իջեւան
(քեարվանսարայ) մը, ուր անոնք կը բնա-
կին եւ իրենց վաճառքները կը ցուցադրեն
ծախելու համար»:

«Պարսից վաճառականութեան մեծա-
զոյն մասը Հայոց ձեռքն է, որովհետեւ
Պարսիկները իրենք հազուադէպօրէն իրենց
երկրէն դուրս կ'ելլեն»:

Օգոստոս 7էն վերջ Bell երեք շաբաթ
կը նաւորդէ Կասպից ծովուն վրայ: «Այս
ժամանակի բոլոր միջոցին մերինքն տար-
բեր ոչ մէկ նաւ տեսանք, բայց Պարս-
կաստանի Գիլանէն եկող ուսական նաւէ
մը: Կարգ մը Հայ վաճառականներով,
որոնք դեսպանին նուիրեցին կողով մը
նարինջ, սեխ, եւ ուրիշ պտուղներ, որոնք
ալ աւելի ընդունելի էին որովհետեւ մեր
այդ տեսակ պաշարը ամբողջութեամբ
սպառած էր»:

«Նիէզապարէն (Niezabart) վեց կամ
ութ մղոն հեռու բարձր ժայռ մը կայ,
Պարմախ (մատ) կոչուած, ծովեզերքին
վրայ, ուր բազմաթիւ Հայեր կ'այցելեն
ամէն տարի իրենց պաշտամանց համար:
Աւանդութիւն մը ունին ըստ որում Եղիա
մարգարէ տարիներ հոս ապրեցաւ»:

Պագու Սեպ. 4: «Ես Հայ վաճառակա-
նէ մը առաջնորդուեցայ մեր վրաններէն
քանի մը մղոն հեռու, այցելելու համար
Պարսիկի մը: Մենք ընդունուեցանք շատ
հաճոյալի եւ բարեկամական կերպով, տու-
նը մաքուր էր, եւ գետինը գորգեր փռուած:
Մեր հիւրասիրութիւնը բաղկացաւ սուրճէ
եւ խաշած բրինձէ»:
Խաշած բրինձով ան-
շուշտ Փիլաֆին կ'ակնարկուի:

Շամախ. Սեպ. 25: «Եւ ճաշեցի Հայր
Peter Ricardի հետ, ընկերակցութեամբ
Ֆրանսացի վաճառականի մը Monsieur
Bourgardi: Այս հայրը Պարսկաստանի
զանազան կողմերը բնակած է իբրեւ բա-
րոյիչ բազմաթիւ տարիներ: Ուսած էր
բժշկութիւն, որ յաճախ կը գործադրէր,
որով ինքզինքը ծանօթացուցած էր նշա-
նաւոր ընտանիքներու, ինք ծանրագլուխ

եւ լուրջ մարդ մըն է, որ իրեն հանդէպ
մեծ յարգանք կը ստիպէ: Ան հոս պզտիկ
հասարակութիւն մը ունի, որոնք միայն
Քրիստոնեայ Հայերէ կը բաղկանան. ա-
սոնք Արեւելեան եկեղեցւոյ գրկէն Արեւ-
մտեան եկեղեցւոյն դաւանաւորիս եղած են,
որովհետեւ մեծագոյն ոճիր է մահմետա-
կան մը հաւատաւորիս ընել»:

«Ժողովուրդին մեծամասնութիւնը Պար-
սիկներ են, կան նաեւ նկատելի թիւով
Վրացիներ եւ Հայեր»:

Դեկ. 4: «Ամէն ինչ պատրաստ ըլլա-
լով մեր մեկնումին համար, մենք հայ-
թայթուեցանք վարիչով (մէյմանտէր), 160
ուղտերով եւ մասնաւորապէս 200 ձիե-
րով եւ ջորիներով. որով Շամախէն մեկ-
նեցանք, ճամբորդելով հեազհեաէ բար-
ձրացող երկրին վրայէն: Երկու օր դադար
առինք Գալգանի (Kalekani) անուամբ
հայ գիւղը»:

«Դեկ. 27ին մենք ճամբորդեցինք շատ
բարձր լեռներու մէջէն, ուրկէ, մեզի ըն-
կերացող Հայ վաճառականի մը ինծի հա-
ւաստածին համաձայն, պարզ օրով, կա-
րելի է տեսնել նշանաւոր Արարատ լեռան
կատարը, որ ըստ Պարսից Աղբի, եւ ըստ
Հայոց Մասիս կը կոչուի, գագաթը յա-
րատեւօրէն ձիւնով ծածկուած է, եւ յա-
ճախ ամպածրար, բարձրագոյնն ըլլալով
Հայաստանի բոլոր այդ լեռնաշղթային
որուն վրայ այն ատեն կը գտնուէինք»:

«Իմ տեղեկութեանցս որքան վաւերա-
կան ըլլալը չեմ կրնար վճռել, բայց կ'ը-
սուի թէ երբ Հայերը կը տեսնեն այս
լեռը, կը խաչակնքեն ինքզինքնին, եւ
իրենց աղօթքը կ'ըսեն, ինչպէս որ սովոր
են երբ կը մօտենան իրենց Սուրբ նկա-
տած վայրի մը»:

Թաւրիզ 27 Դեկ. «Բնակիչները մեծ
մասով Պարսիկ են. թէեւ անոնց մէջ կան
բազմաթիւ Հայեր: Նկատելի հում մե-
տաքսի, նաեւ Կապերտի (գորգի) եւ մե-

1. Անդ էջ 283. - 2. Անդ՝ 286. - 3. Անդ՝ 287-288.
- 4. Անդ՝ 288. - 5. Անդ՝ 291. - 6. Անդ՝ 291.
7. - Անդ՝ 292. - 8. Անդ՝ 293-294.

տաքս ու բամբակ հիւսուածեղէն արտա-
դրութեանց վաճառականութիւն մը ունին:
Գարուչիեան քարոզիչը վանք մը ունին
հոս՝ Հոովմէական Կաթոլիկ դաւանանքով
Հայոց համար. իբր վերահսկիչ կան այդ
կարգին պատկանող երկու հայեր»:

28 Յունուար 1716: «Մենք հասանք
Պարսիկներէ ու Հայերէ բնակուած Գարա-
Չինա (Hara-China) անուանեալ մեծ
գիւղ մը: Այս վայրէն մղոն մը հեռու
մենք զիմաւորուեցանք Հայ քահանայէն,
եւ ընկերացող խումբ մը գիւղացի բնա-
կիւններէ, որոնք եկած էին մեզ զիմաւորե-
լու իբր ընկեր - Քրիստոնեայ: Անոնցմէ
մին ձողի մը վրայ ամբարձած ներկուած
խաչելութիւն մը կը կրէր, ուրիշներ թմբ-
ուկներ եւ սրինգներ, եւ տարբեր նուա-
զարաններ, որոնցմէ մէկ կամ երկու ան-
հատները չափ կը պահէին իրարու զար-
նելով ծննդանք, անոնցմէ շատեր սաղ-
մոսներ եւ շարականներ կ'երգէին, եւ այս
կերպով մեզի ընկերացան մինչեւ մեր
բնակարանները, ուր մենք աննախընթաց
լաւ հիւրասիրութիւն մը վայելցինք»:

«Այս ժողովուրդէն մենք ստացանք,
մասնաւորապէս, շատ լաւ գինի եւ խա-
ղող, զոր կը պահեն ձմեռուան ամբողջ
ընթացքին, կախելով չոր ու բաց տեղեր»:

Ապրիլ 1, 1716: «Ես Զուլա գացի
բարեկամ մը տեսնելու համար ընկերակ-
ցութեամբ Mr. Batsonի, Ընդարձակ տեղ
մըն է արուարձաններուն մէջ, բնակուած
Հայերէ, որոնք անխափան կը կիրարկեն
իրենց Քրիստոնեայ կրօնը»:

Սպահանի մէջ «Հոովմէական Կաթո-
լիկները երեք վանքեր ունին, որոնք են

Գարմիւնեաներունը, Գարուչիներունը եւ
Օգոստինեաններունը: Յիսուսեաններն եւ
Դոմինիկեաններն ունին իրենց յատուկ
վանքերը Զուլայի արուարձանին մէջ, որ
բնակուած է Հայերէ, որոնք իրենց կրօն-
քը ազատ պաշտելու արտօնուած են»:

12 Հոկտ. Մէնգիլի: «Այս եւ շրջակայ
գիւղերուն մէջ կը անուցուին բազմաթիւ
շերամներ, որոնք կ'արտադրեն Գիլանի
նահանգին հում մետաքսին լաւագոյն եւ
մեծագոյն մասը, ուրկէ Հայ վաճառա-
կաններու շնորհիւ կ'արտածուի մասամբ
Ռուսիոյ վրայով դէպ ի Հոլանտա, եւ մա-
սամբ ալ ցամաքի ճամբով՝ դէպ ի Հալէպ,
զաղութային առեւտուրի համար»:

Այս է ամբողջութիւնը Հայերու մասին
Bellի ուղեգրութեան: Ինչպէս ըսի շատ
մը կէտերով կարելոր են այս վկայութիւն-
ները: Հոս կը տեսնենք թէ Հայերը դեռ
ԺԸ դարուն կը շարունակէին տէր ֆեալ
Պարսկաստանէն արտածումի հրապարա-
կին, արտածելով գորգ, հիւսուածեղէն
կին, արտածելով գորգ, հիւսուածեղէն
բամբակեայ կամ մետաքսէ, նաեւ հում
մետաքս, բայց այս մասին այսինքն հում
մետաքսի վաճառականութեան եւ Հայոց
մասին պատմական երկարապատում աշ-
խատութիւն մը աւարտելու վրայ եմ որ
յուսամ շուտով կարենամ հրատարակել:

Երախտապարտ զգացումներով կ'ըն-
դունիմ Bellի կցկտուր եւ սակայն չա-
փազանց թանկագին այս վկայութիւն-
ները, եւ հաճոյքով ուշադրութեան կը
յանձնեմ:

Գ. ԲԵՆԴՍԵԱՆ

1. Անդ էջ 295. - 2. Անդ՝ 296. - 3. Անդ՝ 300. -
4. Անդ՝ 308. - 5. Անդ՝ 310.